թիւնների, հին և նոր Կտակարանի գրքերի, ժամագրքի և ուրիշ բազմաթիւ մեկնաբանական գրքերի։ Թուղթ. 35½×24½ սմ. քառածալ, 1188 թերթ. երկիջեան, իւրաքանչիւրը 28½×9,8 սմ.։ ԳԻՐ. Անցման բոլորգիր, մօտ շեղագրին։ ԳՐԻՉՆԵՐ Մխիթար վարդապետ. (Այրիվանեցի և Սարգիս «... Ողորմեսցի ք՚ս ա՚ծ տ՚ր Մ՚խ վ՚դիս գծաւղի և սատցչի. 40ա, տես և 879. Լուսանցքում 723բ. «զՍարգիս գրիչ առ ք՚ս յիշեայ», գրուած կարմիր թանաքով, ընագրից տարբեր, կանոնաւոր բոլորգրով։ Հաւանօրէն լուսանցքների զարդագրողը կարմիր թանաքով, Սարգիսն էր։ ՍՏԱՑՈՂ. Գրիչ Մխիթար վարդապետ Այրիվանեցին, որ արքեպիսկոպոս էր ըստ 79ա. «Գոհութիւն և փառաբանութիւն» քարոզի մէջ եղած յիշատակութեան։ ԺԱՄԱՆԱԿ. Ձեռագրում թիւ չկայ նշանակուած, բայց նոյն քարոզի մէջ յիշուած են Յակոբ կաթուղիկոս (1268—1287), Լևոն Գ թագաւոր Հայոց (1270—1289), Դեմետր Վրաց թագաւոր (1270—1287). ուրեմն գրուած է 1270—1287 թ թ. մէջ։

Ծանօթ. Հայ գրչութեան գլուխ գործոցներից մէկն է այս Ձեռագիրը մանրանկարների և գրերի կամ զարդագրերի պէսպիսութեամբ ու գեղեցկութեամբ։ Մեծ տօների ընթերցուածների սկսուածքները զարդարուն և առաջին տողերը սիրուն փառագրերով. սովորական ընթերցուածների սկսուածքը սքանչելի զարդագրով կամ թռչնագրով, պարբերութիւնների սկզբնագրերը, ընթերցուածների առաջին տողերը երկաթագիր, երկրորդը բոլորագիր, բոյց ոսկով։

Նկարուած է 415ա. ընագիրը 15,7×7,8 սմ., մեր նկարը 10½×5 սմ.։

102. Մատ. Ս. Էջմ. № 892/979 (կար. 873). Ճաշոց Հեթում թագաւորի նկարազարդ ազնիւ մագաղաթ, 33½×24½ սմ., 476 թերթ։ ԳԻՐ. Բոլորգիր, հաստ, գեղեցիկ և կանոնաւոր, երկիջեան 25,2×7½ սմ.։ ԳՐԻՉՆ ու ՆԿԱՐԻՉԸ տարաբաղդաբար անյայտ։ ՍՏԱՑՈՂ. Հեթում Բ. թագաժառանգ ժամանակ- «հրամանաւ ա՚ծասէր և ամենիմաստ պարոնին Հեթմոյ որդւոյ ք՚ստասակ ս՚ր արքային Լևոնի»։ ԺԱՄԱՆԱԿ 1287/8 թ. Փրկչական. «ի թուականութեանս հայոց ՉԼԷ յանկ ելեալ կատարեցաւ ա՚ծախաւս մատեանս»։ Յիշատակարան 469ա.

Նկարուած է 1164ա. ընագիրը 12×9,8, լուսանկարը նոյն մեծութեամբ,

103. Մատ. Ս. Էջմ. № 226/195 (Կ 219). Աստուածաշունչ (ոչ լիակատար). Ընտիր մագաղաթ, հարթ և փայլուն մաքուր մնացած տեղերում. 24,6×16½ սմ.։ ԳԻՐ. Սքանչելի բոլորգիր։ ԳՐԻՉ. «Անարհեստ գրիչ Կոստանդին ծառայ և աշակերտ վերատացեալ տ՚ն իմում (այսինքն Յովհաննու արքեպիսկոպոսի)։ 195բ։ Անյայտ գրչի գործ են 364—406 թերթերը, որոշ չափով նմանութիւն ունի Ստեփանոսի՝ Հեթում թագաւորի Աստուածաշնչի գրչի հետ, բայց սնդել դժուար է։ ՍՏԱՑՈՂ. Յովհաննէս արքայեղբայր։ Մի քանի տեղ իւր իսկ ձեռքով յիշատակարաններ գրած. 370ա. 403ա. ԺԱՄԱՆԱԿ 1284—1288 փրկչ. «ի թվս» հայոց ՉԼԷ գրեցաւ»։ ՏԵՂ Սիս—Ակներ։ ?

Ծանօթ. Պարբերութիւնների գլխատառերը, հատուածների սկզբնագիր փառագրերը և լուսանցքի սկզբնագարդերը կարմրագեղով։ Շքեղ չէ, բայց ընտիր գրչութիւն է։

Նկարուած է 139ա. ընագիրը